

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 3-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այսօր հրեշտակք ի բարձունս ուրախանան ընդ մարդկան, որ իջեալ ի յերկնից, տան կաւետիս աշխարհի» (շարական) բնաբանով:

*
* *

Հունիսի 10-ին, կիրակի.—Հոգեգալուստ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ի ժամ պատարագի պատարագիչ սրբազան հայրը քարոզում է Հոգեգալստյան խորհրդի մասին:

*
* *

Հունիսի 11-ին, երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանի սաները, առաջնորդությամբ տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի, մեկնում են Իջևան՝ երեքօրյա հանգստի:

*
* *

Հունիսի 12-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ է այցելում ԱՄՆ-ի Քրիստոնեական Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակությունը՝ գլխավորությամբ Խորհրդի աշխատակից հայր Ջոն Լինդների: Պատվիրակության կազմում էին Հռոմեական Կաթոլիկ, Ասորական, Մեթոդական, Պրեսբիտերական և Եպիսկոպոսական Եկեղեցիների հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ՝ թվով 26 հոգի:

Պատվիրակությանը, որը Սովետական Միությունում էր գտնվում ԱՄՆ և ՍՍՀՄ Եկեղեցիների փոխհարաբերությունների կոորդինացման ծրագրով, Վեհարանում ընդունեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Քրիստոնեական եղբայրական սիրո մթնոլորտում տեղի ունեցավ ջերմ զրույց Տ. Սիոն արքեպիսկոպոսի և պատվիրակության անդամների միջև:

Պատվիրակությունն այնուհետև այցելեց Մայր տաճար, եղավ նրան կից թանգարանում, նորակառույց «Ալեք և Մարի Մանուկյան գանձատանը», ինչպես նաև Ս. Հռիփսիմե վանքում:

*
* *

Հունիսի 14-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ են այցելում Անգլիայի Քուաքեռների խաղաղության շարժման կազմակերպության մի խումբ անդամներ:

Վեհարանում հյուրերին ընդունում և բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը: Սրբազան հոր և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ զրույց՝ էկումենիկ ոգով:

*
* *

Հունիսի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վար, ս. պատարագ է մատուցում Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

*
* *

Հունիսի 18-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր Ս. Հռիփսիմե տաճարում ս. պատարագ է մատուցում Տ. Մասիս վրդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը քարոզում է «Հռիփսիմե մեծ խորհուրդ և անուն ցանկալի, եղեր օրինակ սրբութեան կուսանաց» (շարական) բնաբանով:

*
* *

Հունիսի 19-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր Ս. Գայանե տաճարում ս. պատարագ է մատուցում Տ. Գուրգեն քին. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Բաբունեոյն հրամանաւ աներևոյթ ազդմամբ. յարևմտից յարևելս եկեալ հասին. կի լուսով հրեշտակական վարուք կուսութեան. փարատեցին զխաւար դիւապաշտ մոլորութեանց» (շարական) բնաբանով:

*
* *

Հունիսի 21-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ է մատուցում Տ. Ղևոնդ քին. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Շնորհեցաւ մեզ դեղ կենաց սորին նշխարաց ի ձեռն Ս. Գրիգոր Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի» (շարական) բնաբանով:

*
* *

Հունիսի 22-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հունիսի 23-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովսեփ աբեղա Հակոբյանը:

*
* *

Հունիսի 24-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը (քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):